## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 սեպտեմբերի 2025 թվականի N 1118*

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից էր ճանաչվել «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն, որին 2025 թվականի սեպտեմբերի 02-ին էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցվել էր պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում համակարգի միջոցով չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները, որի արդյունքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերեգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով և Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 19-րդ ենթակետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | չափաբաժնի | | | | | | | | | |
| Ծածկագիրը | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չկատարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| «ԿՄՀԲ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» | 1 | էլեկտրական մեքենա /էլեկտրոմոբիլ/ | 11.260.000 | «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ | 01075543 | ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 31/34 | 12.09.2025 | Հրազդանի Համայնքապետարան | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մաս. սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները: | Առկա չէ |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 սեպտեմբերի 2025թ.
ք.Հրազդան